ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ, ՀԱՎԱՔԱԳՐՄԱՆ, ՀԱՐՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ ՁԵՎ

Սույնով համաձայնությունը որևէ եղանակով հաստատելու դեպքում հաճախորդը համաձայնում է, որ «Բիբլոս Բանկ Արմենիա» ՓԲ ընկերության /այսուհետ՝ Բանկ/ հետ գործարար հարաբերություններ հաստատելու, հաճախորդների պատշաճ ուսումնասիրություն կատարելու, հաճախորդի կողմից տրամադրված անձնական տվյալների հավաստիության ստուգում կատարելու, և/կամ հաճախորդի հետ վարկային, գրավի, երաշխավորության և այլ քաղաքացիաիրավական պայմանագրեր կնքելու վերաբերյալ որոշում կայացնելու նպատակով և հաստատման դեպքում պայմանագրային, գործարար հարաբերությունների ողջ ժամկետում Բանկը ստանա անհրաժեշտ անձնական տվյալները պարունակող տվյալների բազայի հետ փոխկապակցված և սույն համաձայնության մեջ նշված տեղեկությունների ստացման հնարավորություն հետևյալ աղբյուրներից՝

- «ԱԲՌԱ Քրեդիտ Ռեփորթինգ» ՓԲԸ-ից,
- ՀՀ ԿԲ վարկային ռեգիստրից,
- «Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամից,
- «Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ» («ԷԿԵՆԳ») -ի միջոցով՝ ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության ինֆորմացիոն կենտրոնի տվյալների բազայից, ՀՀ ներքին գործերի նախարարության միգրացիայի և քաղաքացիության ծառայության անձնագրային և վիզաների վարչության բնակչության պետական ռեգիստրից, ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեգիստրից, ՀՀ ԱՆ քաղաքացիական կացության ակտերի գրանցման գործակալության էլեկտրոնային ռեգիստրից, Համայնքային էլեկտրոնային կառավարման միասնական հարթակի տվյալների շտեմարանից, ՀՀ ԱՆ հարկադիր կատարումն ապահովող ծառայության էլեկտրոնային ռեգիստրից / ԷԿԵՆԳ-ի միջոցով տվյալները հավաքագրվում են ՀՀ կառավարության 2015թ. օգոստոսի 31-ի 1093-Ն և ՀՀ կառավարության 2019թ դեկտեմբերի 19-ի 1849-Ն որոշումների հիման վրա;
- և տվյալների շտեմարաններ վարող և տեղեկատվական այլ հանրամատչելի բազաներից, ինչպես նաև օրենքով չարգելված աղբյուրներից:

«Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքով նախատեսված և պաշտպանվող տեղեկատվությունը հանդիսանում է, սակայն չի սահմանափակվում՝

1. ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՆՁՆԱԳՐԱՅԻՆ ԵՎ ՎԻԶԱՆԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐ

1) ՀԾՀ հայտանիշ՝ նորմալ վիճակ, հրաժարվել է
2) Ազգանուն, անուն, հայրանուն (հայերեն, անգլերեն)
3) Մահացած է/մահացած չէ
4) Մահվան ամսաթիվ
5) Ծննդյան ամսաթիվը
6) Սեռ
7) Հանրային ծառայությունների համարանիշ (ՀԾՀ)
8) Քաղաքացիությունը
9)Անձը հաստատող փաստաթղթի տեսակ
10) Անձը հաստատող փաստաթղթի սերիա և համար, երբ և ում կողմից է տրվել
11) Անձը հաստատող փաստաթղթի վավերականության ժամկետը
12) Հասցե (ՀՀ բնակության կոդ, ՀՀ բնակության մարզ, Համայնք, Բնակավայր, Փողոց, Տուն/Շենք հմ., Տան տեսակ, Բնակարան)
13) Լուսանկար

2. ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

1) Կազմակերպության անվանում (հայերեն, անգլերեն)

2) Կազմակերպաիրավական տեսակ
3) Գրանցման համար
4) Գրանցման ամսաթիվ
5) ՀՎՀՀ
6) Ձեռնարկության կոդային դասակարգիչ (ՁԿԴ)
7) Գործունեության տեսակ / ԱՁ-ի գործունեության խումբ
8) Պետական գրանցման վկայականի համար
9) Սոց. ապահովադրի կոդ
10)Հասցե (Երկիր, մարզ, քաղաք/գյուղ, փողոց, շենք/տուն, բնակարան, փոստային դասիչ)
11) Հեռախոսահամար
12) Տնօրենի կամ ԱՁ-ի վերաբերյալ տեղեկատվություն՝ անուն, ազգանուն, քաղաքացիություն, անձնագրի համար, երբ է տրվել, ում կողմից, վավեր է մինչև, ՀԾՀ, հասցե (երկիր, մարզ, համայնք, քաղաք/գյուղ, փողոց, տան տեսակ, շենք/տուն/տնակ, բնակարան, փոստային դասիչ), հեռախոսահամար
13) գործունեության տեսակի դասակարգչի կոդը,
14) բաժնեմասերի ընդհանուր քանակը,
15) բաժնեմասի արժեքը ՀՀ դրամով,
16) գործադիր մարմնի ղեկավարի պաշտոնը,
17) գործադիր մարմնի ղեկավարի հեռախոսահամարը
18) գործադիր մարմնի ղեկավարի էլեկտրոնային փոստի հասցեն,
19) սոցիալական ապահովադրի կոդ,
20) մասնակցի/բաժնետիրոջ մուտքի, ելքի ամսաթիվ,
21) կազմակերպության/անձի ID,
22) տեղեկություններ հիմնադիր լինելու մասին,
23) ձեռնարկության կոդ,
24) մասնաբաժինների քանակ,
25) տեղեկություն լուծարման մասին,
26) կազմակերպության ներկա քաղվածք, կազմակերպության կանոնադրություն

3. ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

1) Աշխատավայրի ՀՎՀՀ
2) Աշխատավարձը և դրան հավասարեցված այլ վճարումները
3) Քաղաքացիաիրավական պայմանագրով աշխատանքի վարձատրության գումար
4) Եկամտային հարկի չափ
5) Անձի կողմից կատարված սոցիալական վճարումներ
6) Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա (ՀԿԴ) փոխանցված գումարի սոցիալական վճարի գումար
7) Աշխատած ժամերի քանակը

4. ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՖՈՐՄԱՑԻՈՆ ԿԵՆՏՐՈՆ

1) Քրեական պատասխանատվության/դատվածության վերաբերյալ տեղեկատվություն

5. ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԿԱՑՈՒԹՅԱՆ ԱԿՏԵՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ

1) Անուն, Ազգանուն, Հայրանուն
2) Հանրային ծառայությունների համարանիշ (ՀԾՀ)
3) Անձը հաստատող փ/թ տեսակ՝
4) Անձը հաստատող փ/թ համար
5) Անձնագրի տրման ամսաթիվ
6) Անձնագիրը վավեր է մինչև
7) Ում կողմից է տրված անձը հաստատող փ/թ
8) Վիզայի համար, երբ է տրված, ում կողմից

9) Ազգություն
10) Ծննդյան ամսաթիվ
11) Ծննդավայր, ծննդյան հասցե (երկիր, մարզ, համայնք, փողոց, տան տեսակ, շենք/տուն/տնակ, բնակարան, բնակվել է սկսված, բնակվել է մինչև), գրանցման հասցե, բնակության հասցե (երկիր, մարզ, համայնք, փողոց, տան տեսակ, շենք/տուն/տնակ, բնակարան, բնակվել է սկսված, բնակվել է մինչև, գրանցման բաժանմունք)
12) Սեռ՝ արական, իգական
13) Մահվան մասին տեղեկություններ՝ մահվան ամսաթիվ, մահվան պատճառ, մահվան վայր, տարիք, նույնականացում, հասցե
14) Քաղաքացիություն, երկրորդ քաղաքացիություն
15) Նոր ազգանուն
16) Ազգանունը փոխելու պատճառ
17) Ազգանունը ամուսնությունից առաջ
18) Կրթություն
19) Աշխատանք, զբաղմունք
20) Զինծառայության վերաբերյալ տեղեկատվություն
21) Ամուսնական կարգավիճակ
22) Ամուսնության գրանցման ամսաթիվ, ամուսնության գրանցման համար, ամուսնությունը գրանցող բաժանմունք, ամուսնության վկայականի համար
23) Ամուսնալուծության պատճառ, ամուսնալուծության գրանցման հիմք, համատեղ երեխաների թիվը, ամուսինների համատեղ դիմում, խնամակալի տվյալներ
24) Որերորդ ամուսնությունն է
25) Ամուսնու/կնոջ վերաբերյալ տեղեկատվություն
26) Ծնող է, թե ոչ
27) Հայրության հիմք, հայրության հիմքի մանրամասներ (մոր հայտարարություն, դիմումի ամսաթիվ, դատարան, վճռի համար, վճռի ամսաթիվ)
28) Երեխայի մասին տեղեկություններ, քանի երեխա է ծնվել, որերորդ երեխան է, ծննդի կարգավիճակ,
Երեխայի տվյալները հայրությունը ճանաչելուց հետո, տեղեկություններ որդեգրումից հետո
29) Ծնողների (հոր, մոր) վերաբերյալ տեղեկատվություն

6. ՄԱՀԱՑԱԾ ԱՆՁԱՆՑ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐ

1) Անուն
2) Ազգանուն
3) ՀԾՀ
4) Մահվան ամսաթիվ
5) Ծննդյան ամսաթիվ
6) Տիպ

7. ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1) Ավտոմեքենայի ունիկալ ID
2) Ավտոմեքենայի VIN համար
3) Ավտոմեքենայի շարժիչի հզորություն/ձիաուժ
4) Քաշը առանց բեռնվածության
5) Ավտոմեքենայի գույն
6) Փաստաթղթի համար
7) Ավտոմեքենայի հաշվառման համարանիշի տեսք
8) Ավտոմեքենայի թափքի տեսակ
9) Ավտոմեքենայի կարգավիճակ՝ հաշվառված է, հանված է
10) Սեփականության վկայականի համար
11) Պետ. Հաշվառման վկայականի համար

12) Ավտոմեքենայի տեսակի խումբ
13) Ավտոմեքենայի մոդել
14) Ավտոմեքենայի վառելիքի տեսակ
15) Տարանցիկ համարանիշ
16) Հատուկ նշումներ
17) Ավտոմեքենայի հենասարքի համար
18) Ավտոմեքենայի թողարկման տարեթիվ
19) Ավտոմեքենայի տեսակ
20) Ավտոմեքենայի տեսակ ID
21) Առավելագույն թույլատրելի բեռնվածություն
22) Ավտոմեքենայի հաշվառման ամսաթիվ
23) ԱՏՄ շարժիչի համար
24) Ժամանակավոր հաշվառման համար
25) Դեղին հաշվառման համար
26) Ավտոմեքենայի մակնիշ
27) Ավտոմեքենայի մակնիշի տիպար
28) Ավտոմեքենայի կարգավիճակ
29) Կիրառված սահմանափակումներ
30) Գրավադրման մասին տվյալներ (անձի անուն, ազգանուն, հայրանուն, անձի ՀԾՀ, իրավաբանական անձի/ֆիզ.անձ, անձը հաստատող փաստաթղթի համար, սեռ, փաստաթղթի տեսակ, անձի քաղաքացիություն, անձի հասցեի նկարագիր, գրավադրման ամսաթիվ, գրավադրված գումարի չափ, գրավադրված գումարի արտարժույթ, գրավադրման վայր, վերագրավադրման թույլտվություն)
31) Հաշվառված անձի մասին տվյալներ (անձի անուն, ազգանուն, հայրանուն, անձի ՀԾՀ, Իրավաբանական անձի/ֆիզ.անձ, Անձը հաստատող փաստաթղթի համար, սեռ, փաստաթղթի տեսակ, անձի քաղաքացիություն, ծննդյան ամսաթիվ, անձի հասցեի նկարագիր)
32) Սեփականատիրոջ մասին տվյալներ
33) Ապահովագրման մասին տվյալներ
34) Վարորդական իրավունք (ՎՎ համար, ՎՎ կարգեր, ՎՎ զրկված է և ապաակտիվացված լինելու մասին տեղեկատվություն, անձի անուն, ազգանուն, հայրանուն, անձի ՀԾՀ, անձը հաստատող փաստաթղթի համար, սեռ, անձի քաղաքացիություն, ծննդյան ամսաթիվ, անձի հասցեի նկարագիր)
35) Անձի հասցեի նկարագիր (պետություն, մարզ, համայնք, քաղաք, հասցե 1, հասցե 2, տան համար, փողոց, բնակարան, փոստային դասիչ, կազմակերպության հեռախոսահամար, կազմակերպության, բջջ. հեռախոսահամար, էլ. հասցե, կայք, հասցեն՝ ամբողջական տեսքով):

Նշված տեղեկատվությունը Բանկի կողմից օգտագործվելու է հետևյալ նպատակներով և ժամկետներում՝

- Հաճախորդի հետ վարկային /երաշխավորության/ գրավի կամ այլ պայմանագրեր կնքելու մասին որոշումներ կայացնելու կապակցությամբ՝ այդ պայմանագրերի գործողության ողջ ընթացքում /վարկային բյուրոյից հարցում կատարվելու դեպքում վարկային սքոր գնահատականը նվազում է կամ կարող է նվազել/,
- Հաճախորդի ընթացիկ վարկունակությունը ստուգելու նպատակով՝ Հաճախորդի և/կամ Հաճախորդի հետ Փոխկապակցված անձանց հետ վարկային/երաշխավորության/գրավի կամ այլ պայմանագրերի գործողության ողջ ընթացքում, այդ թվում պարտքերի դատական կամ արտադատական գանձման փուլում / վարկային բյուրոյից հարցում կատարվելու դեպքում վարկային սքոր գնահատականի վրա չի ազդում/:
- Բանկի նախաձեռնությամբ Հաճախորդի վարկավորման հնարավորությունները դիտարկելու և/կամ վարկավորման առաջարկներ ներկայացնելու համար՝ Հաճախորդի հետ կնքված վարկային/երաշխավորության/գրավի կամ այլ պայմանագրերի գործողության ողջ ընթացքում /վարկային բյուրոյից հարցում կատարվելու դեպքում վարկային սքոր գնահատականի վրա չի ազդում/:

Հաճախորդն իրավունք ունի իր անձնական տվյալների ուղղման, ոչնչացման կամ մշակումը դադարեցնելու պահանջ ներկայացնել Բանկի ցանկացած մասնաճյուղ գրավոր դիմում առձեռն ներկայացնելով կամ էլեկտրոնային եղանակով: Դիմումը ներկայացնելուց հետո երեսուն աշխատանքային օրվա ընթացքում Բանկը միջոցներ կձեռնարկի համագործակցող անձանցից ստացված անձնական տվյալների մշակումը համապատասխանեցնելու դիմումում ներկայացվող պահանջներին, եթե նման պահանջը բխում է ՀՀ օրենսդրությամբ նախատեսված պահանջներին և պայմաններին:
Հաստատելով սույն համաձայնությունը Հաճախորդը հավաստում է, որ տեղեկացվել է ներքոնշյալ տեղեկատվությանը և համաձայն է, որ.

- ստացված տվյալներն ու տեղեկությունները Բանկը կարող է փոխանցել իր հետ համագործակցող պարտքերի հավաքագրում, արտաքին աուդիտ իրականացնող, իրավաբանական ծառայություններ մատուցող անձանց, վերստուգող իրավասու մարմիններին, հաճախորդներին ծառայություններ մատուցելու նպատակով Բանկին ծառայություն մատուցող ընկերություններին, Բիբլոս Բանկ խմբի մեջ մտնող ընկերություններին,
- համաձայնությունը հետ կանչվելու դեպքում Բանկը գրավոր դիմումը ստանալու օրվան հաջորդող երեսուն աշխատանքային օրվա ընթացքում կդադարեցնի անձնական տվյալների մշակումը, եթե առկա չեն Բանկի նկատմամբ չկատարված պարտավորություններ: Այն դեպքում, երբ Հաճախորդը դիմում է ներկայացնում՝ ստացված անձնական տվյալների մշակումը դադարեցնելու վերաբերյալ, Բանկը գործում է ողջամիտ ժամկետներում՝ առանց անհարկի ձգձգման: Միևնույն ժամանակ, Բանկը չի ջնջի և/կամ չի ոչնչացնի այն անձնական տվյալները, որոնք պարտադիր է պահպանել՝ օրենսդրական և կարգավորող պահանջներին համապատասխանելու նպատակով (ներառյալ՝ փաստաթղթավորման և պահպանման պարտադիր պահանջները): Այն դեպքերում, երբ հավաքագրված տվյալների անհապաղ ջնջումը իրավաչափ կամ հնարավոր չէ, Բանկը կիրառում է մշակման սահմանափակում՝ կիրառելով անձնական տվյալների հասանելիության վերահսկողություններ, որպեսզի տվյալները օգտագործվեն միայն օրենսդրական համապատասխանության նպատակներով, ինչպես նաև այլ օրինական հիմքերով թույլատրելի դեպքերում: Սահմանափակված կամ արխիվացված տվյալների պաշտպանությունն ապահովվում է համապատասխան անվտանգության միջոցներով՝ ներառյալ գաղտնագրում, դերային հասանելիության վրա հիմնված մուտքի վերահսկում, մոնիթորինգ և պարբերական հասանելիության վերանայում՝ համաձայն Բանկի ներքին տեղեկատվական անվտանգության և տվյալների պաշտպանության կարգավորումների: Այն դեպքերում, երբ ջնջումը կամ ոչնչացումը օրենսդրորեն թույլատրելի է և կիրառելի, Բանկը կիրականացնի անձնական տվյալների անվտանգ ոչնչացում, այդ թվում՝ էլեկտրոնային գրառումների անվերադարձ ջնջում (data wiping), ինչպես նաև թղթային կրիչների անվտանգ ոչնչացում (secure shredding):
- անձնական տվյալների մշակումը դադարեցնելու պահանջը կատարելու դեպքում Բանկը կարող է ամբողջությամբ կամ մասնակի դադարեցնել ծառայությունների մատուցումը, այդ թվում բայց չսահմանափակվելով վարկի/վարկային գծի/օվերդրաֆտի վաղաժամկետ մարում պահանջելով, հաշիվները փակելով: Բացի այդ, Հաճախորդը այլևս չի ստանա Բանկի կողմից մատուցվող ծառայությունների վերաբերյալ նոր առաջարկներ կամ Բանկի ծառայություններից արտոնյալ պայմաններով օգտվելու հնարավորություն: